

01/10.1/1104-09

2009-02-20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի և Արմեն Աշոտյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է գինենյութը վերականգնել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում (Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից **2008** թվականի դեկտեմբերի **26**-ին ընդունված «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ուժի մեջ է մտնելու **2009** թվականի մարտի **1**-ից, գինենյութը հանվել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից): Միաժամանակ, նախագծով առաջարկվում է նվազեցնել ներմուծվող զարեջրի, բուսական

և արոմատիկ էքստրակտներ պարունակող վերմուտ և խաղողի այլ գինիների, ինչպես նաև սպիրտային խմիչքների ակցիզային հարկի դրույքաչափերը, որոնք նույնպես սահմանվել են նշված օրենքով:

Այդ կապակցությամբ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Միաժամանակ, ստորև ներկայացնում ենք քննարկման ներկայացված նախագծի հետ կապված որոշ նկատառումներ`

**1.** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկվում է գինենյութը վերականգնել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում, անհրաժեշտ է լրացում կատարել «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **3**-րդ հոդվածում:

**2.** Նախագծով ներկայացված ցանկում բացակայում է ԱՏԳ ԱՍ **2207** ծածկագրին դասվող` «Էթիլային սպիրտ» ապրանքատեսակը, ինչը հասկանալի չէ: Էթիլային սպիրտն իրացվում է նաև մանրածախ առևտրի ոլորտում: Այդ ապրանքատեսակն ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից դուրս բերելը պայմաններ կստեղծի, որպեսզի շուկայում օդու փոխարեն իրացվի էթիլային սպիրտ, ինչը կանդրադառնա նաև օդու իրացման ծավալների, հետևաբար նաև` օղի արտադրողների վրա: Հնարավոր է, որ նմանատիպ երևույթներ տեղի ունենան նաև սպիրտային խմիչքների իրացման ոլորտում:

Բացի դրանից` էթիլային սպիրտն ակցիզային հարկով հարկվող ապրանքների ցանկից դուրս բերելը որևէ հիմնավորում ունենալ չի կարող, քանի որ սպիրտային խմիչքների պատրաստման դեպքում հումքի դիմաց վճարվող ակցիզային հարկը ենթակա է հաշվանցման` այդ հումքից պատրաստված` ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարից: Ներկայումս այդ հաշվանցումն իրականացվում է ոչ թե իրացմանը համամասնորեն, այլ միանգամից` ձեռք բերված սպիրտի դիմաց վճարում կատարելու դեպքում: Այսինքն, էթիլային սպիրտի` ակցիզային հարկով հարկումն արտադրության վրա որևէ բացասական ազդեցություն (նշանակալի ֆինանսական հետևանքներ) չունի, հետևաբար, այն չհարկելն ընդունելի համարվել չի կարող:

**3.** Նախագծով ներկայացված ցանկում ԱՏԳ ԱՍ **2206** ծածկագրին դասվող` «խմորման ենթարկված այլ ըմպելիքներ» ներմուծվող ապրանքատեսակների համար ակցիզային հարկի դրույքաչափեր սահմանված չեն:

Ելնելով շարադրվածից` Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է որ ներկայացված օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-527-03.02.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի N ՀՕ-79 «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ օրենք) 5-րդ հոդվածի առաջին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ակցիզային հարկը վճարվում է հետևյալ դրույքաչափերով՝

Ապրանքի ծածկագիրն ըստ ՍՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը /դրամ/
2203	գարեջուր	ներքին արտադրանքի 1 լիտրի համար	70
		ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	105
2204	խաղողի եւ այլ գինիներ, գինենյութ	բացթողման գնի (առանց	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան

		ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի)	1 լիտրի համար 100 դրամ
		ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	20 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 200 դրամ
2205	վերնուտ եւ խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական եւ արոմատիկ էքստրակտներ	ներքին արտադրանքի 1 լիտրի համար	500
		ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	600
2206	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ, (լինձորի սիդր, պերրու (տանձի սիդր, մեղրաըմպելիք)	ներքին արտադրանքի 1 լիտրի համար	180
2208	սպիրտային խմիչքներ	բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի)	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 380 դրամ
		ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	40 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 600 դրամ
2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ	1,500
2709	հում նավթ եւ նավթամթերքներ	1 տոննա	27,000
2711 (բացառությամբ 2711 11 եւ 2711 21 )	նավթային գազեր եւ գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի)	1 տոննա	1,000»

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարական օրվա հաջորդող տասներորդ օրը: